ՀԱՎԵԼՎԱԾ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2023 թ. փետրվարի 9-ի թիվ 6/9 որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Հ. Վ. Հովհաննիսյան

ԿԱՐԳ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԹԵՄ ԴՊՐՈՑԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՈՒ ԱԶԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Երևանի պետական համալսարան հիմնադրամի «ՍԹԵՄ դպրոց» կառուցվածքային ստորաբաժանման (այսուհետ՝ դպրոց) սովորողների ընդունելության, տեղափոխման ու ազատման կարգը:
2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն են՝

1) **ընդունող հանձնաժողով** – ԵՊՀ ռեկտորի հրամանով ձևավորված, դպրոցի ընդունելության կազմակերպման ու դրա արդյունքների վերաբերյալ վերջնական որոշում կայացնող կոլեգիալ մարմին,

2) **ծնող** – դիմորդի/աշակերտի ծնողները և/կամ ծնողը, օրինական ներկայացուցիչ-ները և/կամ ներկայացուցիչը,

3) **դիմորդ** – դպրոց ընդունվելու համար դիմող ու ընդունելության գործընթացի փուլե-րին մասնակցող անձ,

4) **քննություն** – սահմանված ժամանակահատվածում, մրցութային հիմունքներով անցկացվող առարկայական գիտելիքի ստուգում ու գնահատում,

5) **ընդհանուր իմացության գիտելիքի ստուգում** – առանց գնահատման, բանավոր հարցազրույցի միջոցով հանրակրթության միջնակարգ մակարդակի առարկայական գիտելիքի ու տրամաբանության ստուգում:

2. ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

3. Դպրոցի ավագ (10-12-րդ) դասարաններ ընդունելությունն իրականացվում է չորս ձևով՝

1) հիմնական կամ ընդհանուր ընդունելություն,

2) լրացուցիչ (թափուր տեղերի դեպքում) ընդունելություն,

3) հատուկ ընդունելություն, որը կազմակերպվում է ըստ անհրաժեշտության ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ,

4) արտոնությամբ ընդունելություն, որը կազմակերպվում է հանրապետական առարկայական օլիմպիադաների մրցանակակիրների ու միջազգային առարկայական օլիմպիադաների մասնակիցների համար:

4. Դպրոց ընդունվելու համար կարող են դիմել ՀՀ և օտարերկրյա քաղաքացի դիմորդներ:

5. Ընդունելությունը դպրոց իրականացվում է՝ բնագիտական մեկ առարկայից պարտադիր գրավոր քննություն հանձնելով ու ընդհանուր իմացության գիտելիքի ստուգման հարցազրույցին մասնակցելով: Սույն կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված արտոնության առկայության դեպքում ընդունելությունն իրականացվում է առանց քննության:

6. Դպրոցի ընդունելությանը մասնակցելու համար դիմորդի ծնողը էլեկտրոնային կամ թղթային եղանակով դպրոց ներկայացնում է.

1) դիմում՝ ԵՊՀ ռեկտորի անունով,
2) 3*4 չափսի 1 լուսանկար,
3) դիմորդի ծննդյան վկայականի կամ անձնագրի պատճենը (առկայության դեպքում),
4) դպրոցից դպրոց սովորողի տեղափոխման տեղեկանքը,
5) հիմնական կրթության վկայականի բնօրինակը՝ օտարերկրյա դիմորդների (պարտադիր) համար, իսկ ՀՀ-ում սովորող դիմորդների դեպքում՝ տեղեկանք մինչև ավարտական ատեստատի ներկայացումը:

7. Դպրոցի ընդունելությունը մեկնարկում է յուրաքանչյուր ուսումնական տարվան նախորդող մարտ-մայիս ամիսներին:

8. Դպրոցը յուրաքանչյուր տարվա ընդունելության մեկնարկի մասին տեղեկատվությունը ընդունելությունից առնվազն 2 ամիս առաջ հրապարակում է դպրոցի կայքում ու տեղեկատվական հարթակներում (սոցիալական ցանցեր, զանգվածային լրատվական միջոցներ)՝ բացառությամբ առաջին անգամ կազմակերպվող ընդունելության:

9. 2023-2024 ուսումնական տարվա համար ընդունելությունը կատարվում է 10-րդ և 11-րդ դասարանների սովորողների համար:

10. Յուրաքանչյուր տարվա ընդունելությունից մեկ կամ երկու ամիս առաջ դպրոցը կազմակերպում է բաց դռների օրեր դիմորդների ու նրանց ծնողների համար՝ դպրոցի ենթակառուցվածքներին, կրթական ծրագրերին ու ուսուցման մեթոդներին ծանոթացնելու նպատակով:

11. Դպրոց ընդունելությունն իրականացվում է հետևյալ ընթացակարգով՝

1) 6-րդ կետով պահանջվող փաստաթղթերի ընդունում,

2) **գրավոր քննության անցկացում** (գրավոր քննության քննական հարցաշարերը կազմվում են հանրակրթության միջնակարգ մակարդակի առարկաների ծրագրերի հիման վրա),

3) ընդհանուր իմացության գիտելիքների ստուգում:

12. Դպրոց ընդունվելու համար դիմորդները, ըստ նախընտրության, հանձնում են մեկ պարտադիր քննություն՝ «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» կամ «Կենսաբանություն» առարկաներից որևէ մեկը (բացառությամբ սույն կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերի):

13. Գրավոր քննության արդյունքներն հրապարակվում են դպրոցի կայքում քննությունների անցկացումից 3 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև ուղարկվում դիմորդների կամ նրանց ծնողների կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեներին:

14. Գրավոր քննությունների արդյունքները կարող են բողոքարկվել հրապարակումից հետո՝ 48 ժամվա ընթացքում՝ թղթային կամ էլեկտրոնային ձևով գրավոր դիմում գրելով ընդունող հանձնաժողովի նախագահին:

15. Դիմում-բողոքների վերաբերյալ պատասխաններն ուղարկվում են բողոքարկող անձի էլեկտրոնային փոստին կամ հանձնվում են առձեռն: Բողոքարկման արդյունքում դիմորդների ստացած միավորները կարող են վերանայվել կամ չվերանայվել: Գնահատումն իրականացվում է 20-միավորանոց/բալանոց համակարգով,

16. ընդունելության արդյունքների ամփոփում ու հրապարակում. լիցենզիայով հատկացված տեղերի սահմաններում քննության հավաքած միավորի ու հարցազրույցի արդյունքների հիման վրա ընդունող հանձնաժողովը որոշում է կայացնում ընդունված դիմորդների ցուցակի վերաբերյալ: Ընդունող հանձնաժողովի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

17. Դպրոցից այլ դպրոց տեղափոխումը կատարվում է սովորողի ծնողի դիմումի հիման վրա:

3. ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

18. Դպրոցի ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ ԸՀ) բաղկացած է առնվազն 5, առավելագույնը՝ 9 անդամից: ԸՀ-ն ունի նախագահ:

19. ԸՀ-ն ձևավորվում է, և նրա անհատական կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

20. ԸՀ անդամներ կարող են լինել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի, դպրոցի տնօրենության ներկայացուցիչները, ուսուցչական կազմի անդամները, դպրոցի տնօրենի կողմից հրավիրված մասնագետները:

21. ԸՀ յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

22. ԸՀ բոլոր անդամների հետ կնքվում է «Գաղտնիության պարտավորագիր»՝ ապահովելու ընդունելության գործընթացի գաղտնիությունը:

23. ԸՀ անդամների աշխատանքը վճարովի է. վճարումը կատարվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով սահմանված կարգով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

24.Ընդունող հանձնաժողովի որոշման հիման վրա ԵՊՀ ռեկտորը հրամանագրում է աշակերտներին: Հրամանագրելուց հետո ԵՊՀ-ի ու աշակերտի ծնողի միջև կնքվում է «Ուսումնառության մասին» պայմանագիր: «Ուսումնառության մասին» պայմանագիրը կնքվում է 1-3 տարի ժամկետով:

25.Դպրոցում սովորող աշակերտներն ունեն ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք:

26.ԵՊՀ-ն նպաստի ձևով ֆինանսական աջակցություն տրամադրում է սոցիալապես անապահով ընտանիքների աշակերտներին:

27.Ուսումնառության բարձր առաջադիմության դեպքում աշակերտին տրամադրվում է ուսումնական կրթաթոշակ ռոտացիայի հիման վրա: Յուրաքանչյուր տարի որոշվում են կրթաթոշակի տեղերը՝ ըստ դասարանների:

28. Ֆինանսական աջակցությունը սահմանվում է մեկ ուսումնական տարվա համար և տրամադրվում ԵՊՀ ֆինանսական միջոցների հաշվին:

29. Սոցիալական աջակցության դիմումներն ընդունվում են ուսումնական տարվա յուրաքանչյուր տարվա պարապմունքների սկզբին նախորդող 2 շաբաթների ընթացքում:

5. ՍՈՎՈՐՈՂԻ ԱԶԱՏՈՒՄԸ

30. Դպրոցից սովորողի ազատումը կատարվում է՝

1) ծնողի դիմումի հիման վրա,
2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա,
3) ուսման վարձը չվճարելու հետևանքով,
4) ոչ բավարար առաջադիմության դեպքում,
5) «Ուսումնառության մասին» պայմանագրի, դպրոցի էթիկայի ու վարքագծի, ներքին կարգապահական կանոնները, իրավական այլ կարգեր պարբերաբար ու կոպտորեն խախտելու դեպքում:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

31.Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններից դպրոց ընդունելությունը կատարվում է վկայականի կամ դպրոցի կողմից տրված տեղեկանքի հիման վրա: 2022-2023 ուսումնական տարվա 9-րդ դասարանի աշակերտները կարող են դիմել դպրոց 2023-2024 ուսումնական տարվա 10-րդ, իսկ 10-րդ դասարանի աշակերտները՝ 11-րդ դասարան ընդունվելու համար:

32.Օտարերկրյա քաղաքացի, 12-ամյա կրթությամբ դպրոցներից 9-րդ դասարանը ավարտած աշակերտները առնվազն հիմնական կրթության վկայականի առկայության

դեպքում կարող են դիմել 2023-2024 ուսումնական տարվա 10-րդ, իսկ 10-րդ դասարանի աշակերտները՝ 11-րդ դասարան ընդունվելու համար: